

Հանրահաշիվ 7. N 531, N 534

N531. *Լուծումը:* Թվաբանական մոտեցումը: Այս այն բացառիկ դեպքերից է, երբ թվաբանական մոտեցումը ավելի պարզ լուծման է հանգեցնում: Իսկապես ճանապարհորդները մեկ օրում կանցնեն ճանապարհի համապատասխանաբար $1/10$ և $1/15$ մասերը երկուսով միասին՝ $1/10 + 1/15$ կամ $1/6$ մասը: Իսկ ամբողջը կանցնեն 6 օրում:

Հանրահաշվական մոտեցումը: Եթե ճանապարհի երկարությունը նշանակենք x -ով, ապա մեկ օրում կանցնեն ճանապարհի համապատասխանաբար $x/10$ և $x/15$ մասերը երկուսով միասին՝ $x/10 + x/15$ կամ $x/6$ մասը: Իսկ ամբողջը կանցնեն 6 օրում:

N534. *Լուծում:* Եթե A-ից B շարժվելիս վերելքների ճանապարհը երկու անգամ երկարացնենք, ապա ավտոմեքենան ամբողջ նոր ճանապարհը գնալով 50 կմ/ժամ արագությամբ կծախսի 3,5 ժամ: Նույն կերպ հետ գալուց վերելքների երկարությունը մեծացնենք երկու անգամ և դարձյալ ավտոմեքենան շարժվի 50 կմ/ժամ արագությամբ, կծախսի 4 ժամ: Այժմ նկատենք, որ այս ավելացված ճանապարհը հավասար է AB ճանապարհին, իսկ A-ից B գնալն ու գալը՝ այդ ճանապարհի եռապատիկին: Հետևաբար, եթե այդ ժաբապարհը նշանակենք x -ով, ապա կունենանք՝ $3x/50 = 7,5$ կամ $x = 125$ կմ: